ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

12 ՄԱՐՏԻ 2020թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Ավագ Ավագյանը, Սամվել Գրիգորյանը, Աղվան Հարությունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Սաշիկ Գրիգորյան, Սեդրակ Սաֆարյան, Սամվել Գարսեվանյան , Կարեն Մնացականյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարոզ Սարիբեկյանը

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ12-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ակունք համայքի ավագանու 2020 թվականի մարտի 12-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը

1.Ակունք համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին
2.Համայնքի 2018-2022 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվության վերաբերյալ
3. Ակունք համայնքում իրականացվող ծրագրերը հաստատելու մասին
4. Հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
5. Հողամասերի օտարման մասին
6. Հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին
7.Համայնքի ավագանու 2018թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 59 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14/

Լսեցին
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի,«Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ակունք համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունը համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15/

Լսեցին
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈՌ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82 հոդվածի 7-րդ մասի,համայնքի ավագանին որոշում է '

1.Հաստատել Ակունք համայնքի 2018-2022թվականների հնգամյա զարգացման ծրագրի2019 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը համաձայն հավելվածի :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16/

Լսեցին
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հինք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը
,Ակունք համայնքի ավագանին որոշում է '

1. Հաստատել Ակունք համայնքում իրականացվող ծրագրերը համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թվականի հունիսի 1-ի թիվ 186 -Ն հրամանը , համայնքի ավագանին որոշում է՝

1. 07 -049-0828-0001-ից կադաստրային ծածկագրերով 0.16945հա 3-րդ կարգի արոտավայրը ճանաչել Ակունք համայնքի սեփականություն :

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ,67-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,համայնքի օգտագործման սխեմային համապատասխան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել .
1) աճուրդ–վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի :
2) ուղղակի վաճառքի միջոցով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գներ համաձայն հավելված 2-ի:
Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՇԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին »օրենքի 18-1-ին մասի 29-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 14.1 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1028-Ն որոշման,համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի Նոր գյուղ վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 0.05695 հա (կադաստրային ծածկագիր՝07-049-0301-0072) վարելահող փոխադրել բնակավայրի հողեր նպատակային նշանակության՝բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության,

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 59 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի,համայնքի ավագանին *որոշում է* '

1.Համայնքի ավագանու 2018թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի համայնքների միությանը անդամակցելու մասին» թիվ 59 որոշման մեջ կատարել փոփոխություններ.
1)որոշման «2-րդ» կետում «92840» թիվը փոխարինել «100 000»թվով:
Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21/

Ավագանու անդամներ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԵԽԱԿ ՄԵԽԱԿՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԷԴԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ԷՈՒԻԲԵՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Մարոզ Սարիբեկյանը